

03 նոյեմբերի, 2023 թ.

HSBC Հայաստանի գլխավոր գրասենյակը և STATUS ծառայությունները տեղափոխվում են նոր հասցե

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ HSBC Հայաստան/Բանկ) ուրախությամբ տեղեկացնում է, որ ս. թ. նոյեմբերի 6-ից Բանկի Գլխավոր գրասենյակը կտեղափոխվի նոր, հարմարավետ և ժամանակակից տարածք:

HSBC Հայաստանն իր հաճախորդներին սիրով կհյուրընկալի Երևան, Պարոնյան 42 հասցեում, որտեղ նրանց համար ստեղծված է հարմարավետ միջավայր: Նշենք, որ Բանկը կպահպանի իր Տերյան 66 հասցեում գործող գրասենյակը, որը կշարունակի իր գործունեությունը որպես «Տերյան» մասնաճյուղ:

Ավելին, HSBC Հայաստանի STATUS հաճախորդների սպասարկումը նախկին Բաղրամյան 4/1 հասցեի փոխարեն կիրականացվի նորաբաց Գլխավոր գրասենյակում, որտեղ ստեղծված են բոլոր պայմանները նրանց առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու համար:

«Մենք մեծ ոգևորությամբ ենք բացում մեր նոր Գլխավոր գրասենյակի դռները: Այնտեղ բոլորի համար ստեղծված է հարմարավետ և ժամանակակից միջավայր՝ հաճախորդների սպասուհիներին և բարձր չափանիշներին համապատասխան:

Նոր գրասենյակի բացման համար հիմք է հանդիսացել նաև աշխատանքային պայմանների ապահովման վերաբերյալ HSBC խմբի վերջին մոտեցումների կիրառման մեր հանձնառությունը: Դրանք ենթադրում են ստեղծել պայմաններ աշխատակիցների բարեկեցության համար՝ նախապատվություն տալով նրանց ճկուն աշխատանքի ապահովմանն ու անձնական կյանքի և աշխատանքի միջև հավասարակշռության պահպանմանը: Ժամանակակից ինտերիերային լուծումները հնարավորություն են ընձեռում մեր աշխատակիցներին առաջարկել իրենց նախընտրելի աշխատանքի համապատասխան հարմարություններ»,- մեկնաբանեց HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

HSBC խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC խմբի մայր ընկերությունն է, որի գլխամասը գտնվում է Լոնդոնում: Խումբը իր հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխարհի 62 երկրներում և տարածաշրջաններում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 3,021 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 6 գրասենյակի և մոտ 310 աշխատակցի միջոցով: 2023 թ.-ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 334 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: